ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ
ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM

**Արձանագրություն N 2**

**<< ՇՄԳՄՄԱՀ- ՇՀԱՊՁԲ-17/4-1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Գյումրի

02 դեկտեմբերի 2016թ., ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի ՝

Նախագահ՝ Կարեն Հմայակյան

Անդամներ՝ Անժիկ Պապոյան

Անահիտ Մելքոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նվարդ Բադալյան

**1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեները, փվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին**

---

**(Կ. Հմայակյան)**

1.Սահմանված կարգով ծանուցվել են <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

2. Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| | | |
|---|---|---|
| 1 | Թեոֆարմա ՍՊԸ | ք. Երևան, Գուսան Շերամի 92/3 հեռ. 010 72 08 80 |
| 2 | Մագփոնի ՍՊԸ | ք. Երևան, Շիրվանզադե 15/32, հեռ. 010 23 26 69 |
| 3 | Տոնուս-Լես ՍՊԸ | Ք. Երևան, Վարշավյան 2/1 հեռ. 093 11 44 44 |
| 4 | Արֆարմացիա ՓԲԸ | ք. Երևան, Պուշկինի 56, հեռ. 010 53 22 61 |
| 5 | Նատալի Ֆարմ ՍՊԸ | ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2, հեռ. 010 74 42 12 |
| 6 | Հերմինե Ֆարմեց ՍՊԸ | ք. Երևան, Ավ. Ավետիսյան 76, բն. 17, հեռ. 043 17 08 64 |
| 7 | Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ | ք. Երևան, Ղ Փարպեցու 22/14 հեռ. 010 54 44 06 /116/ |
| 8 | Ֆարմ Թրաստ ՍՊԸ | ք. Երևան, Մամիկոնյանց 48, փ. 101, հեռ. 010 20 34 14 |

| | | |
|---|---|---|
| *9* | *Լեյկոալեքս ՍՊԸ* | *Ք. Արմավիր, Սայաթ-Նովա փ. 33 հեռ. 010 35 03 03* |
| *10* | *Վագա-Ֆարմ ՍՊԸ* | *Ք. Երևան, Ֆիզկուլտուրնիկների 8, հեռ. 010 73 99 30* |

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված մյուս կազմակերպությունների կողմից գնային առաջարկի ծրարներ չեն ստացվել:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 3, դեմ՝ 0***

3. <u>Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության, ինչպես նաև հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.</u>

Բոլոր ընկերությունների ներկայացրած ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և նրանցում առկա են հրավերով/ծանուցմամբ/ պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ դիմում շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու, հայտարարություն շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնային առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Փաստաթղթերը կազմված են բնօրինակից և պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 3, դեմ՝ 0***

***2. Մասնակիցների գնային առաջարկները***

---------------------------------------------------------------------------------

***(Կ. Հմայակյան)***

<< ՇՄԳՄՄԱՀ- ՇՀԱՊՁԲ-17/4-1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով ընթացակարգի մասնակից կազմակերպությունների գնային առաջարկները ներկայացվում են կից հավելված 1-ով/գնահատման թերթիկ/:

Ծանոթություն՝

*Մուգ գույնով նշված գնային առաջարկները Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ են և ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 3, դեմ՝ 0***

***3. 1-ին և հաջորդաբար  տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում***

---------------------------------------------------------------------------------------

***(Կ. Հմայակյան)***

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

***1-ին տեղ զբաղեցնող և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչել***
թիվ 11, 16, 55 չափաբաժնի մասով՝  <<Թեոֆարմա>> ՍՊԸ-ին
թիվ 6, 7 չափաբաժնի մասով՝ <<Տոնուս-Լես>> ՍՊԸ-ին
թիվ 22, 59, 75, 109, 119, 128, 147 չափաբաժնի մասով՝ <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ին
թիվ 3, 4, 8-10, 12, 15, 17-21, 24-30, 32-39, 41, 42, 44-46, 48, 49, 51, 53, 56-58, 60-63, 65-67, 69, 71-73, 76, 77, 81-90,92-101, 103-106, 108, 112-118, 121, 123, 127, 130, 131, 133-140, 145, 146, 149, 150 չափաբաժնի մասով՝ <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ին
թիվ 1, 50, 64, 74, 122, 132, 144չափաբաժնի մասով՝ <<Հերմինե Ֆարմեց>> ՍՊԸ-ին
թիվ  40, 68, 78, 80, 102, 110, 126, 142 չափաբաժնի մասով՝ <<Ռիխտեր-Լամբրոն>> ՀՁ  ՍՊԸ-ին
թիվ 120 չափաբաժնի մասով՝ <<Ֆարմ Թրաստ>> ՍՊԸ-ին
թիվ 2, 13, 14, 23, 31, 43, 52, 79, 83, 84, 91, 107, 111, 129, 141, 143, 151-154 չափաբաժնի մասով՝ <<Լեյկոալեքս>> ՍՊԸ-ին
թիվ 5, 47, 54, 70, 125,  չափաբաժնի մասով՝ <<Վագա-Ֆարմ>> ՍՊԸ-ին

Թիվ 124 և 148 չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, հետևաբար այն համարվում է չկայացած:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 3, դեմ՝ 0***

Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած բոլոր մասնակիցների համար 05.12.2016թ. ուղարկել հարցում ՀՀ Ֆինանսների նախարարություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:
Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձնաժողովը կմերժի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացնի հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 3, դեմ՝ 0***

***4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ձևով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին.***

---------------------------------------------------------------------------------

***(Կ. Հմայակյան)***

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ <<ՇՄԳՄՄԱՀ- ՇՀԱՊՁԲ-17/4-1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ֆինանսների նախարարությունից եզրակացության ստացումից հետո, ժամը 10:00-ին՝ <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ում, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5 հասցեում:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի ՝

| | |
|---|---|
| Նախագահ՝ | Կարեն Հմայակյան |
| Անդամներ՝ | Անժիկ Պապոյան |
| | Անահիտ Մելքոնյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Նվարդ Բադալյան |